



ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ _____-Ա. « _____ » _____ 2025թ.

ք. Երևան

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ) 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մշտադիտարկման (մոնիթորինգի) 2026 թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:
2. Քարտուղարության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո Ծրագիրը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում տեղադրել Պետական գույքի կառավարման կոմիտեի ինտերնետային պաշտոնական www.stateproperty.am կայքում:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Արմեն Հակոբջանյանին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

09.12.2025

X 

Signed by: AVETISYAN ARNAK 1701920336

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2025թ. «_____» «_____» -ի
N _____ - Ա հրամանի

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄՇՏԱՂԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ)

1. Պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մշտադիտարկման (մոնիթորինգի) տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվում է՝ ելնելով պետական սեփականություն հանդիսացող գույքի մոնիթորինգի հիմնական նպատակներից, մասնավորապես.

- 1) գույքի օգտագործման վիճակի գնահատումը.
- 2) գնահատել պետական գույքի օգտագործման արդյունավետությունը.
- 3) վեր հանել գույքի օգտագործումը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներից թույլ տրված շեղումները.
- 4) գույքի օգտագործման արդյունավետության բարձրացում.
- 5) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերի ավելացում.
- 6) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասի ծանրաբեռնվածության իջեցում.
- 7) գույքի օգտագործման վիճակի գնահատումը:

2. Ծրագրում ընդգրկվում են մոնիթորինգի ենթակա անշարժ գույքերը՝ համաձայն ցանկի:

3. Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր միավոր գույքի մոնիթորինգի իրականացման առավելագույն ժամկետը սահմանվում է 10 (տասն) աշխատանքային օր:

4. Գույքի մոնիթորինգը Ծրագրի 3-րդ կետով սահմանված ժամկետում իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկումներ անցկացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 202-Ն որոշմանը

(այսուհետ՝ Որոշում) կից NN 2 և 3 ձևերով նախատեսված տեղեկանքներին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշմամբ սահմանված պետական գույքի էլեկտրոնային հաշվառման բազայում հաշվառված գույքի ընդհանուր բնութագրիչների և նրա օգտագործման արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա:

5. Ուսումնասիրության ընթացքում, պետական գույքի օգտագործողի կողմից տրամադրված և պետական գույքի էլեկտրոնային հաշվառման համակարգում ներկայացված տեղեկատվությունում տեղ գտած թերությունների, վրիպակների վերաբերյալ կոմիտեն գույքի օգտագործողից կամ նրա վերադաս մարմնից կարող է պահանջել փաստաթղթեր, ինչպես նաև պարզաբանումներ գործառույթների իրականացման իրավաչափությունը պարզելու համար:

6. Գույքի մշտադիտարկման իրականացման արդյունքում տեղ գտած օրենսդրական և պայմանագրային խախտումները, թերությունները և բացթողումները գույքի օգտագործման վիճակը բնութագրող ցուցանիշների միջոցով գույքի օգտագործման վիճակի գնահատման վերաբերյալ կատարված եզրակացությունները, ինչպես նաև գույքի օգտագործման բարելավման վերաբերյալ ներկայացվող առաջարկություններն արձանագրվում են N 1 օրինակելի ձևին համապատասխան:

7. Գույքի մշտադիտարկման արդյունքում օգտագործողի կողմից վնաս պատճառած խախտումները, թերությունները և բացթողումները չընդունելու կամ դրանք ընդունելու և սահմանված ժամկետներում չվերացնելու դեպքում կոմիտեն այդ մասին գրությամբ տեղեկացնում է կազմակերպության վերադաս մարմնին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:

8. Գույքը գործող օրենսդրությանը և կնքված պայմանագրերով սահմանված դրույթներին անհամապատասխան օգտագործելու դեպքում կոմիտեն օրենսդրությամբ և կնքված պայմանագրերի համաձայն իրականացնում է համապատասխան միջոցներ (պայմանագրի լուծում, իրավական գործընթացի իրականացում, գույքի հետ վերադարձ, պետությանը պատճառված վնասի հատուցում):